ԼԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ,
ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱԻ

ՆՈՐ ՁՈՒՂԱՅՈՒՄ ԳՐՎԱԾ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Ժողովրդական սրբավայրերի մեջ իրենց ուրույն տեղն են գրավում սուրբ գրքերի պաշտամունքի հետ կապված ուխտատեղիները, որոնք ստեղծված են այդ գրքերի պահպանման եւ պաշտամունքի նպատակով: Հայոց մեջ սուրբ գրքերը հիմնականում ձեռագիր ու տպագիր ավետարաններ են, Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգություն» գիրքը եւ հմայիլներ: Ավելի հազվադեպ սուրբ գրքի դերում կարող է հանդես գալ «Ուրբաթագիրքը»[1]*: Պաշտամունքի առարկա հանդիսացող ավետարանները հաճախ ունենում են իրենց անունները՝ ըստ գտնվելու նախկին կամ ներկա վայրի (Ծուղրութի Ավետարան, Մուղնու Ավետարան, Շ(ու) ըիշկանի Ավետարան)*[2]*, կազմի գույնի (Կարմիր, Շեկ, Ոսկեկող)*[3]*, ծաղկազարդ, պատկերազարդ լինելու հանգամանքի (Ծաղիկ), հրաշալի հատկությունների (Մեռելհարույց, Սասման՝ «ցասման», աղետի, Խնդրակատար, Աստվածախառն), հրաշքով հայտնաբերման կամ ձեռքից ձեռք անցնելու պատմության (Քոշահան, Արծվաբեր, Թագավոր, Խուլ), որեւէ սրբի, որին նվիրված է սրբավայրը կամ որը հայտնվում է երգներում ու տեսիլքներում (Մայրիկ Ս. Աստվածածին, Վեհամոր, Ս. Դավիթ), տիրոջ (Վիշապկենց, Մարխաս, Բարսամենց) եւ այլն: Որոշ ավետարաններ կոչվել են նաեւ Թուխ Մանուկ, քանի որ պահպանվում էին Թուխ Մանուկ սրբավայրերում, հայտնվում էին հավատացյալների երգներում՝ անձնավորված եւ իրենց Թուխ Մանուկ կոչելով:*

Սրբավայրի եւ դրա ստեղծման առիթը հանդիսացող սուրբ գրքի անունները սովորաբար նույնն են. գիրքն իր անունն է տալիս սրբավայ-

---

[1] **Լ. Սիմոնյան, Հ. Հակոբյան, Կ. Հովհաննիսյան**, Դաշտային ազգագրական նյութ (այսուհետ՝ ԴԱՆ), Արարատ, Ուրցաձոր, 2014:

[2] Տես **Թ. Գեւորգյան**, Շուրիշկանի ավետարանի գործառությունը պարսկահայերի ավանդական կենցաղում, Հայոց սրբերը եւ սրբավայրերը, Երեւան, 2001, էջ 411-413:

[3] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Ապարան, 2011:

րին, եւ դա վերաբերում է ոչ միայն փոքր մատուռներին, այլեւ եկեղեցիներին: Մասնավորապես, Երեւանի Ս. Զորավոր Աստվածածին եկեղեցուն իր անունն է տվել այդտեղ տեղափոխված Զորավոր ավետարանը[4]*: Որոշ դեպքերում, սակայն, երկու սուրբ գրքերի անունները կարող են համադրվել, օրինակ Գրիգոր Նարեկացի ավետարան*[5]*, կամ Նարեկ ավետարան: Քիչ չեն դեպքերը, երբ ավետարանը սրբավայրում չի գտնվում. առավել ցավալի դեպքերում դրանք առեւանգվել կամ վաճառվել են խնամողների ժառանգների կողմից, երբեմն դրանք հանձված են լինում Մաշտոցի անվան Մատենադարանին կամ Էջմիածնի ձեռագրատանը, սակայն սրբավայրը չի կորցրել իր անունն ու ուխտավորին:*

Սույն հոդվածում մենք կներկայացնենք նման մի սրբավայր ու դրա մեջ պահպանվող ԺԷ. դարի ձեռագիր մի ավետարան: Հոդվածում բերված ամբողջ նյութը հիմնված է հեղինակների կողմից կատարված երկու ազգագրական գիտարշավների ընթացքում հավաքած տեղեկությունների վրա[6]*: Այն դեպքերում, երբ քննարկվող նյութը վերաբերում է տվյալ սրբավայրին կամ Ավետարանին, համապատասխան հղում չի տրվում: Հաշվի առնելով Ավետարանի տերերի ցանկությունը՝ գտնման վայրը եւ բանասացների անունները չեն տրվում:*

Ավետարանի հայտնաբերման պատմությունը եւ սրբավայրի հիմնադրումը

Բանասացի վկայությամբ՝ իր ամուսնու պապը՝ Նելսոնը, Ի. դ. 30-ական թթ. ապրել է Արթիկի Ղըրխդագիրման (Հնաբերդ) գյուղում: Այրիանալուց հետո նա գնացել է ներկայիս գյուղը, ուր հայտնաբերվել է ավետարանը: Այստեղ Նելսոնը հանդիպել է Թագուհի անունով մի կնոջ, եւ, տեսնելով, որ ապրելու պայմաններն ավելի բարվոք են, որոշել է բնակվել այդ գյուղում: Նա եւ Թագուհին տուն չեն ունենում, վարձով են ապրում: Նելսոնը կնոջը թողնում է այդ տանը, իսկ ինքը գնում է Ղըրխդագիրման՝ իր իրերը բերելու: Այդ գիշեր կնոջ երազում սուրբը ասում է,

---

[4] **Ե. Շահազիզ**, Հին Երեւանը, Երեւան, 2003, էջ 227: Նաեւ **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան,** Զորավոր Ավետարանը, Երեւան, 2016, էջ 16:

[5] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Արագած, 2016:

[6] **Լ. Ավետիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, 2015, **Լ. Ավետիսյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, 2016: Հեղինակները խորին շնորհակալություն են հայտնում պ. գ. թ. Լիլիթ Սիմոնյանին եւ պ. գ. թ. Արսեն Հարությունյանին խորհուրդների եւ օժանդակության համար:

որ ինքը ավետարանն է. «Եկեք ինձ հողի տակից հանեք ու դարձրեք ձեզ տուն» (տան տեղում փլատակներ են լինում): Նելսոնը վերադառնում է, կնոջը չի գտնում: Հարեւաններն ասում են, որ Թագուհին գտնվում է վերեւի թաղում: Երբ գտնում է կնոջը, վերջինս պատմում է երազը: Նրանք քանդում են երազում նշված վայրը եւ փլատակների տակից հանում մի տապանաքար, մոմլաթի կտորի մեջ փաթաթված սուրբ գիրք ու երկաթե խաչ: Այդ նույն տեղում մատուռ[7] են կառուցում՝ մասունքները դնելով ներսում, իսկ կողքին՝ մի սենյակ, որտեղ իրենք են ապրում:

Բանասացի սկեսուրը պատմել է, որ ինքը տեսել է սրբին, ավելի ճիշտ՝ սրբերին: Նրանք ամուսիններ են եղել՝ շեկ մազերով, նրանց կողքին ուռենու ճյուղերից հյուսած մեծ կողովի մեջ զույգ ոսկեծամիկ երեխաներ են դրված եղել՝ ոտք ու գլուխ պառկած, ու կարծես կղզու վրա լինեին՝ շրջապատված ջրով: Բանասացը պատմում է նաեւ, որ երբ պառկում էին քնելու, ուժեղ դմբդմբոց էր գալիս: Իրենց թվացել է, թե տանիքին ինչ-որ կենդանի կա, սակայն սկեսուրն ասել էր, թե ձի է վազում տան մեջ, չվախենան:

Սրբին տեսել է նաեւ բանասացի ամուսինը. բանակ գնալու գիշերը նա խնջույքի ժամանակ անսովոր մրսել է ու մտել թոնրատուն՝ տաքանալու: Դուռը բացվել է, եւ ներս է մտել սպիտակ հագուստով մի ծերունի: Ամուսնու ասելով՝ ծերունին ծանոթ չէր: Նա ձեռքը դրել է նրա ուսին եւ ասել. «Վախենում ե՞ս», նա էլ թե՝ «Չէ, ինչի՞ց պետք է վախենամ»: Ծերունին պատասխանել է. «Մի՛ վախեցիր, ամեն ինչ լավ կլինի», ու անսպասելի հեռացել է: Հետո ներս է մտել ամուսնու հորեղբայրը, եւ ամուսինը նրան հարցրել է. «Ո՞վ էր այդ ծերունին, որ նոր դուրս եկավ դռնով»: Հորեղբայրն էլ զարմացած պատասխանել է. «Երազ ես տեսե՞լ, ինչ է, այստեղ ոչ մեկը չի եղել»:

Սրբավայրի տեսքը

Ինչպես նշվեց, ներկայումս սրբավայրը գտնվում է բնակելի տան ետնամասում՝ թոնրատան կողքին: Այն փոքր սենյակ է՝ բետոնե հատակով, գաջապատ դեղնավուն պատերով: Սրբավայրը լուսավոր է՝ դիմացի մեծ լուսամուտի շնորհիվ: Դռնից դեպի ձախ՝ անմիջապես պատին հպված, երկու իրար կողքի դրված քարերի վրա տեղադրված է հողից հանված

---

[7] Սրբավայրը մատուռ են անվանում գյուղացիները, բայց իրականում այն մատուռ չէ բառի ճարտարապետական իմաստով, այլ մի սենյակ է, որն ընկնում է տան ետնամասում՝ թոնրատան կողքը:

յուրահատուկ սեղանի ձեւով տապանաքարը՝ ծածկված սպիտակ շուշպաներով: Այն կարմրավուն քարից է՝ վրան մարդկային մարմնի գծապատկերով: Ներքեւի հատվածը ջարդված է, գլխամասում կան սպիտակ եւ կարմիր շուշպաներ, սակայն դրանք ծածկված են երկու սփռոցանման մեծ կարմիր խաչով սպիտակ շուշպաներով: Վրան դրված է ժամանակակից տպագրության Նոր Կտակարան, որի վրա գտնվում է ձեռագիր Սուրբ ավետարանը՝ առջեւում հողից հանված հինավուրց մետաղյա խաչը: Ավետարանի ետեւում պատին հենված է Քրիստոսի գիպսե գունազարդ պատկերը: Սեղանի եւ կողքի պատերի պարանների վրա փռված են սպիտակ շուշպաներ՝ կարմիր խաչերով: Սեղանի դիմացի պատի առջեւ տեղադրված է մոմակալը: Պատերին հենած եւ կախված են շուրջ մեկ տասնյակ սրբանկարներ, որոնցից մի քանիսը ձեռագործ են:

Մատուռը բազմիցս վերանորոգել են, սակայն խոնավությունից պատի ծեփերը թափվում են: Քանի որ մատուռի մուտքը տանից է, տանտերերը որոշել են դրսի կողմից դուռ բացել, բայց վախեցել են՝ մտածելով, որ սրբին դուր չի գա, եւ իրենց հետ դժբախտություններ կպատահեն:

Սրբավայրի հավատալիքներն ու գործառույթները

Բանասացի սկեսրայրը եւ նրա եղբայր Տաճատը մասնակցել են Հայրենական պատերազմին: Սկեսրայրը Ռոստովից վերադարձել է, իսկ Տաճատը մինչեւ Բեռլին է հասել: Պատերազմի ժամանակ Տաճատը «խաչի մեքենան է վարել» (բժշկական մեքենա), վիրավորներ տեղափոխել ու բազմիցս մահից փրկվել է, քանի որ իրենց սուրբը միշտ իր հետ է եղել:

Բանասացի սկեսուրը մեծ հավատքով կին է եղել եւ ծառայել է սրբավայրին: Եթե որեւէ մեկը բանակ գնալուց առաջ սրբավայր է եկել ու մոմ վառել, նա մատուռին նվիրաբերած ասեղնագործ թաշկինակներից (շուշպաներից) մի փոքրիկ կտոր է կտրել ու ամրացրել նրանց հագուստին: Եվ նրանք բոլորը ողջ-առողջ վերադարձել են, իսկ այդ փոքրիկ կտորը հետ են բերել մատուռ ու դրել փոքրիկ արկղի մեջ:

Վերը շարադրված տեսիլքը, որում սուրբը հույս է տալիս բանակ գնացող ամուսնուն, Տաճատի՝ սրբի կողմից պաշտպանվածություն զգալը, բանասացի սկեսուրի ծեսը վկայում են, որ սրբավայրի գլխավոր գործառույթներից է զինվորների հովանավորությունը:

Բանասացը նաեւ պատմում էր, որ երբ կարկուտ էր գալիս, սկեսուրը վերցնում էր ավետարանն ու երկաթե խաչը, դուրս էր գալիս, եւ կարկուտն անմիջապես դադարում էր: Այսպիսով, սրբավայրի մյուս գոր-

ծառույթն էր կարկուտ կտրելը, այսինքն՝ բերքի պաշտպանությունը: Ավետարանների ուժը հաճախ է նպաստում բերքի պահպանմանը կամ պտղաբերությանը: Օրինակ՝ նման մի գործառույթ ունի Արագածոտնի մարզի Սարալանջ գյուղի ավետարանը, որը բարձրաձայն ընթերցելուց անձրեւ է գալիս[8]*:*

Ավետարանի հետ կապված են այլ դեպքեր եւս: Հարեւաններից մեկը հիվանդանում է, եւ ընտանիքի անդամները խնդրում են ավետարանն իրենց տուն տանել՝ հիվանդին օգնելու նպատակով: Բանասացի սկեսուրը, ընդառաջելով խնդրանքին, տալիս է, սակայն վախենում է, եւ ամբողջ գիշեր չի կարողանում քնել: Երբ լույսը բացվում է, գնում, ետ է բերում գիրքը եւ այլեւս ոչ մեկին չի տալիս: Բանն այն է, որ այս տանը եղել է նաեւ Էֆիմերտե (Եփրեմ Վերդի), որը վերցրել են, սակայն չեն վերադարձրել:

Մի անգամ Գյումրիից մի աղջիկ է գալիս իր մոր հետ, ասում է, որ երազում տեսել է այս մատուռը: Երբ տանտերը ցանկացել է նրան ուղեկցել դեպի սրբավայրը, աղջիկն ասել է. «Մի՛ արի, ես տեղը գիտեմ», ու գնացել է դեպի մատուռը: Այդ աղջիկը այստեղ էր եկել բժշկվելու նպատակով:

Հետեւաբար, սրբավայրի գործառույթներից է նաեւ հիվանդների բժշկումը: Այս գործառույթն առհասարակ ամենատարածվածն է ժողովրդական սրբավայրերի դեպքում, այդ է պատճառը, որ մարդիկ դիմում են Ավետարանի օգնությանը, թեկուզեւ դրա տերերն իսկ չեն հաստատում Ավետարանի այդպիսի զորությանը:

Մատուռի մաքրությամբ զբաղվում են թաղի չամուսնացած աղջիկները, ասեղնագործ շուշպանները լվանում են խմոր շաղելու տաշտի մեջ՝առանց օճառի, ու չեն արդուկում: Այսինքն պետք է պահպանվի խստիվ անարատ մոտեցում. չամուսնացած աղջիկները, շուշպանները ամենասրբազան (հացի խմոր շաղելու տաշտը) ամանում լվանալը, օճառով լվանալու եւ արդուկելու արգելքը բազմապատկում եւ շեշտում են տեղի սրբազանությունը: Նշենք, որ այս անգիր կանոնը վերաբերում է նաեւ այլ սրբավայրերի շուշպանների խնամքին:

Ավետարանը

Ավետարանը 17×13×4 սմ մեծությամբ կաշեկազմ մատյան է՝ բաղկացած 302 թղթե թերթերից: Գրված է բոլորգրով, վիճակը բավարար է,

---

[8] **L. Սիմոնյան**, ԴԱՆ, Արագածոտն, Սարալանջ, 2010:

տառերը եւ գույները լավ պահպանված են, թերթերին առկա են խոնավության թեթեւակի հետքեր:

Տախտակե միջուկով կազմի դիմերեսին ամրացված է մետաղյա խաչ՝ ծայրերին կապույտ եւ կարմրավուն քարեր: Խաչի վերեւի ձախ անկյունում ամրացված է մեկ այլ՝ ավելի փոքր ծաղկանման հավասարաթեւ խաչ: Կազմի կաշին դարչնագույն է, աջ կողմը մաշված եւ կտրտված: Ամենայն հավանականությամբ, կազմը հին է, գուցե ԺԸ.-ԺԹ. դդ.: Կազմի դարձերեսն ավելի լավ է պահպանվել, հարդարանքում առկա են երկու նախշազարդ դրվագված շրջանակներ, որոնց կենտրոնում՝ գեղեցիկ հորինվածքով խաչ է նկարազարդված՝ վերին եւ ստորին հատվածներն ամփոփված մեծ եռանկյունիների մեջ:

Բովանդակություն

1. 1ա-82ա ավետարան ըստ Մատթեոսի

2. 82բ-136ա ավետարան ըստ Մարկոսի

3. 136բ-226ա ավետարան ըստ Ղուկասի

4. 227ա-294բ ավետարան ըստ Յովհաննու

Ձեռագիրն աչքի է ընկնում ոչ շքեղ նկարազարդմամբ: Պատկերված են չորս ավետարանիչները (Հովհաննես ավետարանչի պատկերը զգուշությամբ կտրած-հանած է, որի վկայությունն է այդ տեղում մնացած թղթի նեղ շերտը): Ավետարաններից յուրաքանչյուրն սկսվում է պատկերազարդ անվանաթերթով, առաջին նախադասությունները գրված են թռչնագրերով, գրեթե բոլոր թերթերին առկա են լուսանցազարդեր՝ ոճավորված ծառեր, թռչուններ, տաճարներ եւ այլն: Գլուխներն սկսվում են թռչնագրերով, առաջին տողը գրված է կարմիր թանաքով: Յուրաքանչյուր պարբերություն սկսվում է կարմիր եւ կապույտ սկզբնատառերով, բառերը գրված են միասին, երբեմն իրարից անջատ, առատորեն կիրառված են կրճատման, առոգանության եւ կետադրական նշաններ: Գրությունը երկսյուն է՝ սահմանագծված կարմիր թանաքով: Մատթեոսի, Մարկոսի եւ Ղուկասի ավետարանները ավարտվում են ընդմիջարկումով, օրինակ՝ Մատթեոսի ավետարանն ավարտվում է այսպես. «Ավետարանն ըստ Մատթէոսի: Նախադրութի[ւն]: Մարկոսի Աւետարանչին»: Դրանից հետո ներկայացված են յուրաքանչյուր ավետարանչի ով լինելը եւ տվյալ ավետարանի բովանդակությունն ըստ գլուխների, որից հետո համաբարբառ խորանները՝ տրված աղյուսակի ձեւով:

Ավետարանն սկսվում է Մատթեոսի մանրանկարով՝ էջ 1ա (նկ. 1), որին հաջորդում է անվանաթերթը: Կիսախորանի եւ առաջին տողի արանքում

Նկ. 1. Մատթեոս ավետարանիչ, թերթ 1ա

Նկ. 2. Ս. Ավետարանի կազմը դիմացից

Նկ. 3. Մարկոս ավետարանիչ, թերթ 82բ

Նկ. 4. Ղուկաս ավետարանիչ, թերթ 136բ

ավելացված է. «ս[ր]բ[ո]յ աւետարանի ըստ Մատթէոսի»[9]: Ավետարանի մի քանի էջերում կան հատուկ նշումներ, որոնք, հավանաբար, կապված են ավետարանի գործնական կիրառության հետ եւ ընդծում են ընթերցվածների տեղը[10]:

Մարկոսի ավետարանն սկսվում է 82բ էջից, որտեղ զետեղված է Մարկոսի մանրանկարը (նկ. 2): Հաջորդ՝ 83ա էջին Մարկոսի ավետարանի անվանաթերթն է: Մարկոսի ավետարանի սկզբնատողի մի մասը գրված է թռչնագիր, իսկ Ս գլխատառը կենդանագիր է՝ ուղղահայաց զույգ ստեղներն արտահայտված են Մարկոսին խորհրդանշող առյուծների տեսքով, որոնք իրենց թաթերում ջահ են բռնել: Հաջորդ տողը («որպէս եւ գրեալ է Եսայի մարգարէ[11]») գրված է կարմիր թանաքով, մնացածը շարունակվում է սեւ թանաքով: Թերթի ներքեւում ավելացված է. «ս[ր]բոյ աւետարանի Յ[իսու]սի Ք[րիստո]սի որ ըստ Մարկոսի» տողը: Այստեղ եւս կան հատուկ նշումներ՝ այլ ձեռագրով:

Ղուկասի ավետարանը սկսվում է 136բ. էջից, ուր զետեղված է ավետարանչի մանրանկարը (նկ. 3)[12]: Հաջորդ՝ 137ա էջին անվանաթերթն է: Ավետարանի սկզբնատողի առաջին բառը գրված է թռչնատառ, իսկ գլխատառ Ք-ն արտահայտված է ավետարանչին խորհրդանշող կապույտ եզան եւ թռչնի համադրությամբ: Այս ավետարանում նույնպես կան հատուկ նշումներ:

Հովհաննեսի ավետարանը պետք է սկսեր 226 էջից, սակայն ավետարանչի մանրանկարը կտրած-հանած է: 227ա էջին Հովհաննեսի ավետարանի անվանաթերթն է: Սկզբնատողի առաջին մասը գրված է թռչնատառ, իսկ գլխատառ Ի-ն՝ կապույտ եւ կարմիր թռչունների համադրությամբ: Քանի որ Հովհաննես ավետարանչի խորհրդանշանը արծիվն է, գուցե այս թռչունները արծիվներ են, սակայն այստեղ առկա է որոշակի վնասվածք, ինչի պատճառով հնարավոր չէ հստակ որոշել թռչունների

---

[9] Համեմատելով այս տողի ձեռագիրն ավետարանի երկրորդ հիշատակարանի ձեռագրի հետ, հանգեցինք այն եզրակացության, որ այս տողն ավելացրել է երկրորդ հիշատակարանի գրող Տեր Ներսեսը:

[10] Հավանաբար այս նշումները եւս պատկանում են Տեր Ներսեսին:

[11] Մեր ձեռքի տակ եղած Նոր կտակարաններում այս տողն այլ կերպ է. «Որպէս եւ գրեալ է ի մարգարէս»:

[12] Ղուկաս ավետարանիչը նկարված է Մատթեոս եւ Մարկոս ավետարանիչների մանրանկարների որոշակի համադրմամբ՝ Ղուկասի դիրքը նման է Մատթեոսին, բացառությամբ գլխի թեքվածության, իսկ սենյակի ներքին հարդարանքը նման է Մարկոսի մանրանկարի հարդարանքին:

տեսակը: Այս ավետարանում եւս կան հատուկ նշումներ:

Ավետարանիչների լուսապսակները ոսկով են արված եղել, որը մասամբ թափվել է:

Ավետարանը հարուստ է լուսանցազարդերով, որոնցից մի քանիսն ունեն խորհրդաբանական իմաստ[13]. ծառի, տաճարի, լուսապսակով տղամարդու կամ կնոջ պատկերները նկարված են համապատասխան հատվածներում. դրանով ծաղկողը ցանկացել է հաղորդել տվյալ հատվածի բովանդակությունը: Այսպես, Մատթեոսի ավետարանի ԻԱ. 19-21 հատվածում պատկերված է մի ոճավորված թզենի՝ ակնարկելով թզենու առակը: Նույն ավետարանի (Մատթ. ԻԲ. 39, ԻԳ. 1) մեկ այլ թերթին պատկերված է ոճավորված տաճար. այստեղ Քրիստոս կանխատեսում է Տաճարի եւ Երուսաղեմի կործանումը: Ղուկասի ավետարանի ԺԹ. 45-46 հատվածում նույնպես ոճավորված տաճար է պատկերված, որն ակնարկում է տաճարից վաճառականների վտարումը:

Չորս ավետարանների այն հատվածներում, ուր խոսքը Քրիստոսին խաչից իջեցնելու մասին է (Մատթ. ԻԷ. 57-61, Մարկ. ԺԵ. 43-47, Ղուկ. 50-54, Հովհ. 38-41), լուսանցքներում պատկերված է լուսապսակով Հովսեփ Արիմաթացին (այս դեպքերում էլ լուսապսակներն արվել են ոսկով, բայց այն թափվել է): Առաջին երեք դեպքերում պատկերված է միայն Հովսեփ Արիմաթացին, սակայն Հովհաննեսի ավետարանի համապատասխան տեղում իրար դեմ դիմաց՝ տարբեր թերթերին պատկերված են Հովսեփ Արիմաթացին ու Մարիամ Մագդաղենացին (287ա): Հովհաննեսի ավետարանում Քրիստոսին խաչից իջեցնելու դրվագին անմիջապես հաջորդում է Մագդաղենացու այցը Քրիստոսի գերեզմանին կիրակի օրը՝ աղջամուղջին եւ Քրիստոսի գերեզմանը դատարկ հայտնաբերելը (Հովհ. Ի. 1-3), ուստի այստեղ Մագդաղենացուն պատկերելով՝ հենց այդ սյուժեն է ցույց տվել սույն ավետարանի ծաղկողը:

Գրչության հիշատակարանում ծաղկողի անունը նշված չէ, ինչպես եւ գրիչը չի նշել իր անունը: Ավետարանիչների մանրանկարները ոճական առումով բավականին տարբերվում են լուսանցազարդերից: Մանրանկարները կատարված են հմուտ ձեռքով՝ ծավալների, դիմագծերի եւ ձեռքերի նրբին արտահայտությամբ, իսկ լուսանցազարդերն ավելի

---

[13] Ինչպես նշում է Ս. Տեր-Ներսեսյանը, մի շարք պատկերային մոտիվներ, որոնք առաջին հայացքից կարող են զարդեր թվալ, իրականում կապված են տեքստի որոշակի հատվածի բովանդակության հետ, ինչպես ծառերը, խաչերը, փոքրիկ տաճարները, տես **Ս. Տեր-Ներսեսյան,** Էջմիածնի ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը, Հայ արվեստը միջնադարում, Երեւան, 1975, էջ 33:

սխեմատիկ են, գծանկարային: Հետեւաբար, հնարավոր է, որ մանրանկարներն ու լուսանցազարդերը տարբեր ծաղկողների են պատկանում: Դատելով ավետարանիչների հելլենական զգեստներից՝ մանրանկարների ծաղկողը, հավանաբար, օգտվել է ավելի հին օրինակից:

Ավետարանն ունի երեք հիշատակարան, որոնցից առաջինը գրված է գրչի կողմից Հովհաննեսի ավետարանի վերջում[14]՝ էջ 294բ-299բ: Մինչ բուն հիշատակարանին անցնելը, գրիչը հակիրճ ներկայացրել է Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանությունը: Այդ մասը արձակ է գրված, իսկ ահա բուն հիշատակարանը գրված է չափածո:

Հիշատակարանի չափածո հատվածի սկզբում հակիրճ ներկայացվում է Նոր Կտակարանը: Դրանից հետո նշվում է պատվիրատուն՝ համեստ տղա՝ երիտասարդ եւ ցանկալի, ճարտար եւ ազնիվ, հեզ եւ հույժ խելոք բազրգան (վաճառական) Խաչատուրը: Նրա ծնողներն են Բաբենն ու Մարիամը, եղբայրն է Սարհատը, իսկ մյուս եղբայր Ֆարհատը երիտասարդ հասակում մահացել է: Ցանկանում է, որ նրանք արժանի լինեն արքայությանը, երբ փչի գաբրիելական փողը (այսինքն Ահեղ դատաստանի ժամանակ): Խաչատուրը «խիստ աննման» գործ է արել, որ գրել է տվել ավետարանը՝ Աստծո Շունչն ու Բանը: Կրկին հետեւում է Խաչատուրի գովքը, ով այս պատվերի համար շնորհ ստացավ՝ զավակ ունեցավ: Գրիչը ցանկանում է, որ Խաչատուրի ծնողները՝ մուհդուսի (մահտեսի) Բաբեն եւ Մարիամը, եղբայրներ Սարհատն ու Ֆարհատը լինեն Քրիստոսի աջ կողմում՝ Ուռնայի կալում: Ահեղ դատաստանի ժամանակ Քրիստոսի աջ կողմում՝ արեւելքում, գտնվելը նշանակում է, որ նրանք արդար են: Հետո թվարկում է պատվիրատու Խաչատուրի քույրերին՝ Ամրզատե, Շուշան, Ասլզատե, Սինան ու եղբորը՝ Փանոսին, նրա փոքր որդի Գրիգորին՝ նորաբողբոջ եւ սիրելի: Առկա է գրչության թվականը՝ Ի. (20) հոբելյան, ՁԸ. (88) վրան ավելացրած ամիսն ու ամսաթիվը՝ մայիսի 15-ին: Ավետարանը գրվել է Նոր Ջուղայում: Սրանից հետո գրիչը տալիս է թեմակալ առաջնորդի անունը՝ Տեր Խաչատուր՝ Խաչատուր Կեսարացին: Գրիչը Կեսարացուն անվանում է շատ շնորհալի, հռետոր՝ հայերի մեջ հռչակված: Որպես Նոր Ջուղայի Հայոց իշխան՝ հիշատակում է Վաթանի որդի Սարֆռասին: Հետո հերթով թվարկում է եկեղեցու քահանաներին, որոնց հետաքրքիր բնութագրումներ է տալիս: Տեր Մարգարեն քաջ էր, խելքը ճարտար, ժրաջան: Տեր Սարգիսը «ահարկաճայն» էր, շնորհալի երաժիշտ:

---

[14] Աջ լուսանցքում կարմիր, կապույտ եւ կանաչ գույներով բույսի եւ թռչնի համադրությամբ զարդանախշ:

Տեր Գրիգորը ծեր իմաստուն էր: Տեր Մխիթարը իր անվան նման հեզ էր, խոնարհ եւ փափկաձայն: Տեր Սիմոնը նոտարն էր, որ հետո դարձավ բազրգան (առեւտրական): Տեր Պետրոսի մականունն էր Փահլեւան (ուժեղ), որ Հնդկաստանից էր: Տեր Ասատուրը տասը գես ուներ (գուցե տաս հյուսք) եւ հմուտ ձկնորս էր: Տեր Կարապետը գիրք կազմող էր եւ սույն Ավետարանի գրչի նման Անգեղտնից էր: Տեր Թումանը Սպահան էր եկել հայրենի Վանից՝ ագահությունից դրդված: Վերջում սովորության համաձայն գրիչը նսեմացնում է ինքն իրեն՝ միտքը կույր է, ձեռքն անբան, մարմինը՝ տկար, նա ունայն տրուփ է[15]*, եղկելի եւ անբան, թեեւ քահանա է, բայց ավելի անարդ է, քան աշխարհիկները: Հետաքրքիր է, որ այստեղ նաեւ արտացոլված է այն երեւույթը, որ քահանան ավելի հարգված է, քան աշխարհականը: Սակայն գրիչը, զարմանալիորեն, չի նշում իր իսկ անունը:*

Գրչության հիշատակարանից հետո, մյուս թերթին գրված է. «Արեւեցաւ Աւետարանս ի թուին Տեռն փրկչին 1608 թ.»: Չենք կարող ասել, թե ով եւ երբ է սա գրել: Սակայն այստեղ ակնհայտ սխալ է գրված «Տեռն» բառը, որ պետք է լիներ «Տեառն»: Հաշվի առնելով այս գրվածքի՝ժամանակակից գրիչով արված լինելը, այն պետք է որ գրված լինի ոչ վաղ անցյալում: Հավանաբար այս գրվածքի հեղինակը գրչության հիշատակարանում նշված թվականի Զ-ն շփոթել է Ծ-ի հետ եւ նրա հաշվումներում 1639 թ. դարձել է 1608 թ.:

Այս թերթի մյուս երեսից սկսվում է հիշատակարանը, որը գրել է Տեր Ներսեսը: Նա խնդրում է հիշել իրեն, իր կողակից Գուլվարդին, ծնողներ Ավետիսին եւ Քիշմիշին: Քահանա Ներսեսը Ավետարանը գնել է իր արդար վաստակով: Խնդրում է աղոթքներում հիշել Տեր Ավետիսին (այսինքն նրա հայր Ավետիսն էլ է եղել քահանա) եւ Քիշմիշին, մեծ պարոն Ներսեսին (հավանաբար սա նույնպես ինքն է՝ Տեր Ներսեսը կամ գուցե իր պապը) եւ իր գերդաստանի մնացած բոլոր անդամներին՝ անուն առ անուն: Վերջում տալիս է ավետարանի գնման թվականը՝ 1788 թ.:

Ավետարանի մեջ առկա հատուկ նշումները, հավանաբար, պատկանում են երկրորդ հիշատակարանը գրող Տեր Ներսեսին, քանի որ դրանք ձեռագրով տարբեր են ավետարանի տեքստի ձեռագրից: Լինելով քահանա՝ նա այս ավետարանն օգտագործել է իր աշխատանքի մեջ եւ նշումցուցիչներ արել համապատասան տեղերում:

---

[15] Տրուպ՝ հետնագույն, նվաստ, փոքր, տես՝ ՆՀԲ, հ. Բ., էջ 898:

Ավետարանի վերջին թերթին կա եւս մեկ հիշատակարան՝ գրված 1906 թ. փետրվարի 14-ին: Հիշատակարանի մեջ նշված է Փայաջոկ[16] գյուղը, հավանաբար, ավետարանի նախկին տերը, մահտեսի Ավետիքի տան Ահարոնը, եղել է փայաջոկցի:

Հիշատակարանն ավարտվում է գրչի ստորագրությամբ:

Հավանաբար, Փայաջուկի Ս. Գեւորգ եկեղեցու (կառուցվել է 1751 թ.) տանիքը փլուզվել է՝ տակը թողնելով ավելի քան 100 մարդու, այդ թվում՝ ավետարանի տիրոջ ընտանիքի անդամներին: Այդ իրադարձությունը կարող էր դառնալ ընտանիքի մնացյալ անդամների գաղթելու պատճառը:

Այսպիսով, այս սրբավայրի սրբազան առարկաներն են հողից հանած տապանաքարը, մետաղյա խաչն ու ավետարանը: Ավետարանը գրվել է 1639 թ. Նոր Ջուղայում՝ անհայտ գրչի կողմից (գրիչն իր անունը չի նշել), անեցի վաճառական Խաչատուրի պատվերով: Հետագայում այն գնել է երկրորդ հիշատակարանը գրող Տեր Ներսեսը 1788 թ., ով այն օգտագործել է ծիսական նպատակներով: Մինչեւ հողի տակ թաղելը (առնվազն 1906 թ.) ավետարանը եղել է Սալմաստի Փայաջուկ գյուղում, որտեղից էլ այն բերել են ներկայիս գտնվելու վայրը: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, հավանաբար, պատիժներից եւ աքսորից խուսափելու համար ավետարանը թաղել են հողի տակ: Ի. դարի 30-ականների վերջում այն երազով գտել են եւ մինչ օրս պահպանում են այդ վայրում:

Սրբավայրի սրբին տեսել են շեկ ամուսինների տեսքով, որոնք իրենց մոտ ունեցել են կողովի մեջ դրված երկու ոսկեծամիկ մանուկներ՝ քույր եւ եղբայր: Սուրբը հայտնվել է նաեւ ծերունու կերպարով: Սրբավայրի հիմնական գործառույթներն են զինվորների պաշտպանությունը, կարկուտ կտրելը՝ պտղաբերությանը նպաստելը, բերքի պահպանությունը, հիվանդությունների բժշկումը:

Սրբավայրի տարածքը պետք է միշտ մաքուր լինի: Այն մաքրում են միայն կույս աղջիկները: Շուշպանները նույնպես լվանում են միայն կույս աղջիկները՝ հացի համար խմոր հունցելու տաշտի մեջ, առանց օճառի: Դրանք չի կարելի արդուկել. այս ամենը կրկնապատկում է սրբավայրի սրբազանությունը:

---

[16] Փայաճուկ-Փայաջուկ՝ գյուղ Պարսկահայաստանում, Սալմաստ գավառում, տես ՀՀՇՏԲ, h. 5, էջ 228:

РЕЗЮМЕ

Среди народных христианских святилищ особое место занимают святилища, связанные с почитанием священных книг. Подобное святилище было исследовано недавно авторами этой статьи, где хранится Евангелие, написаное в 1639 г., в Новой Джуге, по заказу купца Хачатура. В Евангелии есть миниатюры-портреты трех евангелистов (портрет евангелиста Иоанна срезан) и множество орнаментов на полях. Святилище представляет из себя комнату в задней части жилого дома. Основными священными объектами являются могильная плита, выкопанная из земли, металлический крест и само Евангелие, найденные вместе в земле. Персонифицированного святого данного святилища люди видели в образе светловолосой семейной пары с двумя детьми – мальчиком и девочкой – в корзине. Святой являлся также в образе старика. Основные функции святилища – покровительство солдатам, прекращение града, обеспечение плодородия и урожая, излечение от болезней.

SUMMARY

Among the popular Christian sanctuaries, a special place is occupied by sanctuaries associated with the veneration of sacred books. Such a sanctuary has been recently investigated by the authors of this article, where one can find a Gospel, written in 1639 in New Julfa, by the order of merchant Khachatur. There are miniatures-portraits of three evangelists (the portrait of John the Evangelist is cut off) and many ornaments in margins in the Gospel. The sanctuary is identified as a room in the backside of an apartment building. The main sacred objects are a tombstone, dug out of the earth, a metal cross and the Gospel itself found together in the ground.

People used to consider the image of a blond-haired couple with two children - a boy and a girl - in a basket as the personified saint of the sanctuary. The saint was also seen in the image of an old man. The main functions of the sanctuary are patronage of soldiers, cessation of hail, assurance of fertility and harvest, cure for diseases.